

չարական ասել օրհնութեանն ի փառս Քրիստոսի եւ սրբոցն նորա : Եթէ հաճեսցին կամք եղբայրութեան ձերոյ՝ Տեառն գոհութիւն . եւ եթէ ոչ ախորժիցէք՝ կամք ձեր եղիցին : Իսկ զմեզ ի մեղադրանաց եւ ի բամբասանաց ազատ թողուլ աղաչեմք» :

Այս եւ նման կարգադրութիւնները, որոնցմով բարեգարգեց Մովսէս Եկեղեցին, կը հետապնդէին ծածուկ նպատակը, գրաւիչ ընծայել Աստուծոյ տաճարը ժողովրդեան եւ հրապուրել զանոնք խուռնընթաց ներկայ գլտնուելու ծիսակատարութեանց . արարողութեանց ներգաչնակ բեմադրութիւնը պիտի վառէր ներկաները բարեպաշտ զգածուններով եւ կրթէր անոնց սրտերը պաշտամանց ինկարոյր ազդեցութեան տակ :

Մովսէս ինքնին, ինչպէս ժամանակակիցներու ակնարկութիւնները ենթադրել կուտան, օժտուած էր հնչիւն եւ հաճելի ձայնով . եւ կային իր շարժ ու ձեւերու եւ կազմուածքին մէջ վսեմ եւ վայելուչ գծեր : Իր դեզերունները Ամիթ, Կ. Պոլիս, Երուսաղէմ ընծայած էին իրեն առիթ հանդիսատես ըլլալու այդ պատրիարքանիստ քաղաքներու մէջ այլ եւ այլ անգամներ մեծաչուք ծիսակատարութեանց : Անոնք գործած էին տպաւորութիւններ իր հողւոյն խորքը, որոնք ապա, երբ հրապարակ եկաւ իբրեւ վարդապետ, եպիսկոպոս եւ կաթողիկոս, խօսեցան իր մէջ : Այս է պատճառը, որ Մովսիսի հանդիսակատարութիւնները պատկառազդեցիկ